

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2018թ. հունվարի 19 -ի
նիստի /արձ.5/

1. Հավանություն տալ ԵԹԿՊԻ-ի 2018-2022թթ. ռազմավարական ծրագրի նախագծին, հաստատել և երաշխավորել ներկայացնելու Խորհրդի հաստատմանը:

2. Հաստատել բակալավրի կրթական ծրագրով 2018թ. ընդունելության ներքոհիշյալ մասնագիտությունների մասնագիտական ծրագրերը և գնահատման չափանիշները

- Դերասանական արվեստ

- Ռեժիսուրա

- Պարարվեստի ռեժիսուրա

- Պարարվեստ

- Կինոարվեստ

- Օպերատորություն

- Թատրոնի, կինոյի և հեռուստատվորտի նկարչություն

- Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում

- Թատերագիտություն

- Կինոգիտություն

- Սցենարադրամատուրգիական արվեստ

2.1 հանձնարարել ինստիտուտի կայքի պատասխանատու Ռ. Առաքելյանին մինչև ս.թ.

փետրվարի 9-ը բակալավրի կրթական ծրագրով 2018թ. ընդունելության մասնագիտական կրթական ծրագրերը և գնահատման չափանիշները տեղադրել ինստիտուտի կայքում,

2.2 2018թ. ընդունելությունը նախապատրաստելու նպատակով՝

2.2.1 մինչև ապրիլ ամիսը պատրաստել և հրատարակել ինստիտուտի 2018թ.

ընդունելության բրոշյուրը,

2.2.2 այցելություններ կազմակերպել գործառնաեր և դպրոցներ, ավարտական

դասարանների համար կազմակերպել բաց դռների օրեր:

3. Սկզբունքորեն հավանություն տալ Մ. Հովհաննիսյանի և Ա. Եղիազարյանի հեղինակած

«English for Film and Art» ուսումնական ձեռնարկի հրատարակմանը,

3.1 . Մ. Հովհաննիսյանին և Ա. Եղիազարյանին հանձնարարել մեկամսյա ժամկետում վերախմբագրել քննարկման ներկայացված ուսումնական ձեռնարկը՝ նկատի առնելով քննարկման ընթացքում արված դիտողություններն ու առաջարկները,

3.2 հանձնարարել՝

3.2.1 Մ. Գալստյանին, Ա. Երզինկյանին, Լ. Մուրադյանին և Ն. Սարգսյանին մեկ անգամ ևս ծանոթանալ նշված ուսումնական ձեռնարկի վերախմբագրված տարբերակին,

3.2.2 ինստիտուտի ֆինանսատնտեսական մասին՝ կազմել նշված ուսումնական ձեռնարկի հրատարակման ծախսերի նախահաշիվը:

4. «Լավագույն ուսանողական ներկայացում» անվանակարգում «Արտավագր» ամենամյա թատերական մրցանակաբաշխությանը մասնակցելու համար ներկայացնել ռեժիսորադերասանական 3-րդ կուրսի (կուրսի ղեկավար Հրաչյա Գասպարյան) «Շեքսպիրյան կրքեր» ուսանողական ներկայացումը:

5. Հանձնարարել ամբիոնների վարիչներին վերահսկել դասախոսների հաճախելիությունը, պարտավորեցնել արտասահման մեկնելու դեպքում դիմումները ներկայացնել համապատասխան փաստաթղթային հիմնավորումներով և ամբիոնի վարիչի եզրակացության առկայությամբ:

6. ԵԹԿՊԻ-ի խորհրդի նիստը հրավիրել ս.թ. հունվարի 30-ին:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան